Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի

«Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ի

Զարգացման ծրագիր

2023-2028թթ

Գյումրի 2023

Բովանդակություն

1. Դպրոցի զարգացման ծրագրի կառուցվածքային սխեմա
2. Նախաբան
3. Առաքելություն
4. Հաստատության նկարագիրը
5. Հաստատության գործունեություն
6. Կրթության որակի ապահովում և ուսուցման գործընթացի կազմակերպում
7. Դպրոցի զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները
8. Պատասխանատուները
9. Արդյունքների գնահատման չափանիշները
10. Ռիսկերը
11. Ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները
12. Վերահսկողության մեխանիզմը
13. Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները
14. Եզրակացություն

Դպրոցի զարգացման ծրագրի կառուցվածքային սխեմա

Դպրոցի առաքելությունը

Դպրոցի նկարագիրը. գործունեություն

Իրավիճակի վերլուծություն

Ուժեղ և թույլ կողմերը

Զարգացման ծրագրի նպատակների և խնդիրների սահմանումը

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը

Պատասխանատուները

Արդյունքների գնահատման չափանիշները

Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Վերահսկողության մեխանիզմները

Նախաբան

Ցանկացած զարգացման ծրագիր իրենից ներկայացնում է իրավական ակտ, և ռազմավարական փաստաթուղթ է:

Ուսումնական հաստատություն զարգացման ծրագրի առանցքում կրթության որակի բարելավումն է, որը ներառելու է զարգացման համար անհրաժեշտ բաղադրիչներ՝ մշակման պարտադիր քայլեր, մեթոդական ցուցումներ, չափորոշիչներ, կատարողականության կիսամյակային և տարեկան հաշվետվություններ՝ իրենց ցուցանիշներով, պահանջներով ու արդյունքի գնահատմամբ:

Սույն զարգացման ծրագիրը նախատեսվում է «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի համար, 5 տարի ժամկետով, որում նկարագրվում են հաստատության առկա խնդիրների իրատեսական լուծումներ, թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների ու ծախսերի հնարավորինս բալանսավորում՝ բնականաբար իր ռիսկային գործոններով:

Ծրագրով առաջարկվում են միջոցներ, ՀՀ օրենքի սահմաններում խնդիրներին լուծումներ տալու տարբերակներ, նոր ռեսուրսներ ու հնարավոր ներդրումներ:

Բնականաբար ծրագիրը նախատեսված է դպրոցի՝ որպես կրթօջախ, ուսուցման որակը բարելավելու, առավելագույնին ձգտելու, զարգացնելու, հզորացնելու, մեծ ու համերաշխ ընտանիք դարձնելու համար, ուր սիրով կհաճախեն աշակերտները, իսկ ուսուցիչները կվայելեն իրենց աշխատաժամանակը:

Ծրագրի տեսլականով պատկերացնում եմ ստեղծել ջերմ ու կանչող մթնոլորտ, ուր կթևածի սերը, հարգանքը, փոխըմբռնումն ու զիջողականությունը, բայց այդ ամենի հետ մեկտեղ կունենանք վերահսկելի, կանոնակարգված ու դասակարգված ռեժիմ, երբ յուրաքանչյուրը գիտի իր անելիքը, հստակ պատկերացում ունի ինչ անելու, ինչպես անելու մասին և որ, կարևորն է, ձգտի առավելագույնին:

Որակյալ արդյունք ստանալու համար պարզ է, որ առողջ ու համերաշխ միջավայրից բացի պետք է ունենալ նաև փոխհամաձայնեցում յուրաքանչյուր քայլին, յուրաքանչյուր գործընթացում, որին ներգրավված լինեն ծնողները, աշակերտները, անկախ խորհրդի անդամ լինել-չլինելուց, և դպրոցը իր բազմաբովանդակությամբ՝ սկսած մաքրուհուց

մինչև տնօրեն, ներառական-մանկավարժահոգեբանական աջակցություն ցուցաբերող թիմից մինչև վարչական թիմ:

Ծրագիրը հանդիսանում է ծրագրավորված, պլանավորված հնգամյա գործընթաց, որն ունի հստակ առաքելություն, առաքելությանը հավատարիմ սկզբունքներ, չափելի ժամկետներում հասանելի անելիքների փաթեթ:

Ծրագիրը ենթադրում է ունենալ վերջնարդյունք, ըստ որի կլինի ավելի հաճելի կրթական միջավայր, առավել հմուտ և արարող մանկավարժական կորիզ, ժամանակի պահանջներին համապատասխան կայուն ու հստակ դիրքորոշումով,բարձր արժեհամակարգով, իր վաղվա տեսլականը որոշակի պատկերացնող շրջանավարտ և դպրոցից գոհ ծնող:Դպրոցը կդառնա համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող ժամանակակից դպրոց բոլորի համար:

Զարգացմն ծրագրի իրագործման ճանապարհին որպես նշանաբան ուղղորդվում եմ հետևյալով.

«Ուսուցման համար և՛ աշակերտել

Գեղեցկի՛ն,

Բարո՛ւն,

Վսեմի՛ն,

Լավի՛ն...»

Այսինքն ստեղծել ու ավելացնել նորը՝ հնի լավագույն արժեքներն ու ավանդույթները պահպանելով. քանի դեռ ապրում ենք, սովորում ենք:

Առաքելություն

Որպես կարգախոս ունենալով «բոլոր փոքրերը հանճարներ են, բայց մեծերը խանգարում են փոքրերին մեծանալ»՝ առավելագույնս ձգտելու եմ թև տալ և ազատություն մատաղ սերնդին, զուտ նաև միայն նրա համար, որ տեսել են պատերազմ ու համաճարակ:

Որպես կրթօջախ՝ դպրոցի առաջնային ու հիմնավոր առաքելությունն ու տեսլականը մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունն է, բայց այսօր ժամանակը ցույց է տալիս, որ գրատախտակը, կավիճն ու գրիչը երեխային ավելի քիչ են հետաքրքրում ցավոք: Մյուս կողմից խելագարություն է անել նույն բանը, սպասել ուրիշ արդյունքի: Ուրեմն առքելությանս կարևորագույն կետերից է երեխային կապել գրքին այն դեպքում, երբ նա արդեն մանկապարտեզից կապված է սմարթֆոնին ու համացանցին: Հետևաբար ժամանակի պահանջներին համահունչ կարևորում եմ մեդիագրագիտությունը: Եթե երեխան սովորի սմարթֆոնից ու համացանցից գրագետ օգտվել, ապա կշահի նաև ուսումը, ստեղծագործ միտքը, արարելը. չէ՞ որ երեխան երևակայության անսպառ աղբյուր է, իսկ երևակայությունն ավելի կարևոր է, քան գիտելիքը:

Առաքելությանս մյուս կարևոր կետն է կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը. «կայծակնային արագություն», «տեղեկատարափի մրրիկ», ինտեգրում և հարմարվողականություն. Ահա 21-րդ դարը, որը նաև կրթական ոլորտում է պահանջում շրջադարձ: Այս պարագայում զարգացման ծրագիրը պիտի ենթադրի աստիճանական իրականացող, պահանջի դեպքում նաև փոփոխվող ծրագիր՝ զարգացող ծրագիր:

Բոլոր դեպքերում նպատակը մեկն է՝ կրթել ու դաստիարակել մատաղ սերնդին, որի կարևորագույն գործոնն է ուսուցիչը: Ուրեմն նաև ուսուցչի առաջխաղացումն ու զարգացումն է կարևորվում, որն էլ իրականանալու է ինքնակրթման, մեթոդմիավորումների կարծիքափոխանակման, հաճախակի կազմակերպվող մասնագիտական պարապմունքների շնորհիվ (համատեղ կազմել թեստեր, փոխանակել և գրել): Սա կօգնի, որ շահագրգռված լինեն և չերկմտեն սեփական նախաձեռնությամբ իրականացվող և մասնագիտական որակ բարձրացնող ատեստացիային մասնակցելուց:

Ի վերջո կարևոր են նաև նպատակային էքսկուրսիաները, թեմատիկ միջոցառումները, խմբակների ու տարբեր նպատակային դասընթացների կազմակերպումը, որոնք աշակերտին կկապեն դպրոցին: Չսովորող աշակերտն էլ յուրաքանչյուր էքսկուրսիայից, միջոցառումից կամ որևէ խմբակի նախապատրաստական աշխատանքներին մասնակցելուց անպայման դրական որևէ արժեք կտանի իր հետ:

Նաև կարևորում եմ յուրաքանչյուրի մեջ դրական ու կարողունակ կողմերը գտնելը, բացահայտելը և վեր հանելը:

Կրթության, դաստիարակության ոլորտում անելիքները շատ են, կարևորից կարևորը կա, կան նաև կետեր, որոնք ժամանակի ու ընթացքի մեջ պարզ ու որոշակի կդառնան: Ինչպես ասվում է «կեցությունն է որոշում գիտակցությունը»: Ըստ էության հնարավոր չէ ներկայացնել ամբողջական, վերջնական, տեսանելի ծրագիր ու տեսլական առանց բացթողումների և անկանխատեսելի ռիսկերի:

Զարգացման ծրագիրը մշակելիս առաջնորդվել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հրապարակած պահանջների ու ձևաչափերի համապատասխան: Ծրագրի հիմք հանդիսացել են հանրակրթության ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերը.

- ՀՀ սահմանադրություն
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք
- Հանրակրթության պետական չափորոշիչ
- Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք
- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք
- Հանրակրթության մասին ՀՀ օրենք
- Կրթության մասին ՀՀ օրենք
- Լեզվի մասին ՀՀ օրենք
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք
- ՊՈԱԿ-ի մասին ՀՀ օրենք
- Հանրակրթության պետական չափորոշիչ

- Դպրոցի օրինակելի կանոնակարգ
- Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները
- Ինչպես նաև մանկավարժական խորհրդի նիստով մշակված կոլեգյալ կառավարման խորհուրդի որոշմամբ սահմանված դպրոցի ներքին կանոնակարգը
- Կարգեր, հրամաններ, ոլորտը կարգավորող ներքին հանձնարարականներ

Գյումրու թիվ 40 հիմնական դպրոցի նկարագիրը

«Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը գտնվում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆրանց Վերֆելի հրապարակ 4 հասցեում: Հաստատության տարածքն 0.200537 հա է, որից 835.86 քմ պատկանում է դպրոցի շենքին:

Հաստատությունը հիմնվել է 1990թվականին, Լիցենզիա տարրական՝ 05.04.2011թ.

հիմնական՝05.04.2011թ.

Սահմանային տեղերի քանակը տարրականի համար նախատեսված է 175, իսկ հիմնականի համար 195 աշակերտ:

Դպրոցը նախատեսված է 370 սովորողի համար:

Հաստատության շենքը տիպային է, ունի երկու մասնաշենք, ջեռուցման համակարգը լոկալ է, ջրամատակարարումը՝ մշտական: Սովորողների թիվը 209 աշակերտ, որից 17-ը՝ ԿԱՊԿՈՒ սովորող: Դասընթացը երկհերթ է, աշխատանքային շաբաթը՝ հնգօրյա: Դպրոցն ունի 14 դասարան, 10 դասասենյակ, գրադարան՝ 4977 ֆոնդով:

Մեթոդմիավորումները 3-ն են՝ պատմաբանասիրական,

բնագիտամաթեմատիկական, տարրական:

Աշակերտական լրիվ համակազմ- հունվարի 1-ի դրությամբ 303 աշակերտ

Առաջադիմության սանդղակ ՝ ըստ 2022-2023 ուստարվա տվյալների

Դասարան	Քանակ	Առաջադիմություն
2-րդ Ա	19	100 %
2-րդ Բ	19	100 %
3-րդ Ա	18	100 %
3-րդ Բ	15	100 %
4-րդ Ա	21	100 %
4-րդ Բ	22	100 %

5-րդ	32	100 %
6-րդ Ա	17	100 %
6-րդ Բ	16	100 %
7-րդ Ա	20	100 %
7-րդ Բ	21	100 %
8-րդ Ա	15	100 %
8-րդ Բ	17	100 %
9-րդ	28	100 %

Ուսուցիչների տարիքային սանդղակ

Ուսուցիչների թիվը	2022-2023 ուստարի
Մինչև 30 տարեկան	1
31- 40 տարեկան	7
41-50 տարեկան	8
51-55 տարեկան	2
56 և ավելի	5

Հաստիքացուցակ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների քանակը /դրույք/
1	2	3
Վարչատնտեսական անձնակազմ		
1	Տնօրեն	1
2	Տնօրենի ՈՒԱ գծով տեղակալ	1
3	Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	1
4	Հաշվապահ	1
Ընդամենը վարչատնտեսական անձնակազմ		**4**
Ուսումնա-օժանդակ անձնակազմ		
1	Զինղեկ	1
2	Քաղպաշտպանություն	0,5
3	ԴԱԿ	1,5
4	Ուսուցչի օգնական	2,5
5	Համակարգչային օպերատոր	1
6	Գրադարանավար	1
Ընդամենը ուսումնա-օժանդակ անձնակազմ		**7,5**
Սպասարկող անձնակազմ		
1	Տնտեսվար	1
2	Հավաքարար	2
3	Պահակ	2
4	Գործավար	1
5	Հնոցապան	2
6	**Ընդամենը սպասարկող անձնակազմ**	**8**

Ընդամենը	**19,5**
Փաստացի ուսուցիչների թիվը	**23**

Սեփական նախաձեռնությամբ իրականացվող կամավոր ատեստավորմանը մասնակցել է մեկ ուսուցիչ. հաղթահարել է 30% հավելավճար ստանալու շեմը:

Հայտագրվել է մեկ ուսուցիչ, որն ունի միջին մասնագիտական կրթություն:

Միջին դրույքաչափ – 117,2

Ուսուցիչների դրույքների թիվը – 18,7

Ուսուցչի միջին աշխատավարձ – 127,262 դրամ

63 և ավելի տարիք ունեցող ուսուցիչներ – 2

Տարակարգ ունեցող ուսուցիչ – չկա

Ձեռնարկատիրություն – չկա

Առաջադիմության որակ – բոլոր օղակներում առաջադիմությունը 100% է :

Տվյալները՝ ըստ 2022-2023ուսումնական տարվա :

Հաստատության գործունեությունը

Ըստ գործունեության ոլորտի՝ «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը իրականացնում է հանրակրթական տարրական և հիմնական ծրագրեր: Այն իր գործունեությունը կազմակերպում է ՀՀ օրենքով սահմանված կետերի ու կարգավորումների պահանջով, ֆինանսավորվում է պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումներով:

Շենքային պայմանները բավարար են, բայց վերանորոգման և անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական բազայով համալրելու կարիք ունի, կարիք ունի նաև ՆԶՊ դասասենյակի և բնագիտական առարկաների համար անհրաժեշտ գույքով հագեցած լաբորատորիաներ ստեղծելու:

Նշվածները ձեռք բերելու համար նախատեսվում է կատարողականն ապահովել բյուջետային հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ձեռք բերված միջոցներով, դրանց արդյունավետ օգտագործմամբ, խնայողություններով:

Դպրոցն ունի օրենքով սահմանված կարգով խորհուրդներ, որոնց գործունեությունը իրականացվում է օրենքվ սահմանված կարգով, համապատասխան փաստաթղթերով և մատյաններով և վերահսկվում է օրենքով սահմանված կարգով՝ լիազոր մարմնի կողմից:

Դպրոցը համագործակցել է ԿԶՆԱԿ-ի, ՇՊՀ-ի և Այբ-ի հետ: Նախատեսվում է ընդլայնել համագործակցությունների շրջանակը Շիրակի Տմակ-ի, մշակութային, գեղարվեստական կազմակերպությունների, այլ ուսումնական հաստատությունների, Գյումրու Ռուսական կենտրոնի հետ: Կարող են լինել հասարակական կազմակերպություններ, որոնք հնարավոր չէ նշել հնգամյա ժամանակային գործունեության մեջ:

Կրթության որակը կարելի է գնահատել լավ՝ ըստ տրամադրված սանդղակի, բացը հնարավոր է լրացնել նորարարական տեխնոլոգիաների ձեռքբերմամբ, խմբակների ձևավորմամբ,ուսուցիչների՝ պարտադիր ու սեփական նախաձեռնությամբ իրականացվող ատեստացիաների մասնակցությամբ, հերթական վերապատրաստումների մասնակցությամբ:

Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

Հաստատության շենքային պայմաններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցը ունի • Ուսուցչանոց • Երկու առանձնասենյակ • Ուսուցչի օգնականի սենյակ • Մարզադահլիճ/կահավորված • Ճաշարան • Խոհանոց/կահավորված • Սովորողի սննդի կազմակերպումը իրագործվում է ԴՍԵԲ ծրագրով • Բուժկետ • Պահեստ • Երկու սանհանգույց /տղաների և աղջիկների/ • ԱՐՄԱՏ լաբորատորիա • Տարհանման երկու ելք • Հակահրդեհային անվտանգության համակարգ • Տեսաձայնագրման համակարգ • Գիշերային լուսավորություն • Սպորտային գույք	Դպրոցը չունի • Ռազմագիտության սենյակ • Համակարգչային դասասենյակ • Հոգեբանի, հատուկ մանկավարժի կամ լոգոպեդի սենյակ • Տեխնոլոգիայի սենյակ • Հանդիսությունների դահլիճ • Բակային մարզադահլիճ • Ապաստարան • Նկուղ • Ընդլայնել սովորողի սննդի կազմակերպման համագործակցության շրջանակները

Նպատակ

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան շենքային և բակային պայմաններ ստեղծել՝ արդյունավետորեն օգտագործելով յուրաքանչյուր քառակուսի-մետրը:

Խնդիր

Ձեռնարկել համապատասխան ֆինանսական միջոցներ ստեղծելու, բարեկարգելու, հարմարեցնելու համար՝ օգտվելով բյուջետային կամ այլընտրանքային միջոցներից:

Ռիսկեր

Ֆինանսական ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ:

Շինանյութի և աշխատաշուկայի գնային աճ:

Ձեռնարկատիրական գործունեություն կամ դրամաշնորհային ծրագիր կազմելու մոտիվացիայի պակաս:

Ռիսկերը մեղմացնող գործողություններ

Բյուջեի ճիշտ պլանավորում, առաջնային խնդիրների վերհանում, լուծման ուղիների որոնում:

Դպրոցի գործունեության լուսաբանում:

Շահագրգիռ մարդկանց ներգրավում:

Նյութատեխնիկական բազա

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցն ունի • 18 համակարգիչ • Մարզագույք • Ժամանակակից տեխնիկաներ՝ պլանշետ, էլեկտրոնային գրատախտակ, պրոեկտոր, տպիչ սարքեր	Դպրոցը չունի • Լաբորատորիաներ՝ իրեն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով • Նոր սերնդի համակարգիչներ • Առարկայական կաբինետներ • Գույքը ունի թարմացման կարիք՝ ժամանակի պահանջներին համապատասխան

Նպատակ

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազայի ապահովում:

Աշխատակազմի համար ստեղծել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ,դպրոցը համալրել համակարգչային տպող-բազմացնող սարքավորումներով , արագ ինտերնետ կապով և ցուցադրական սարքերով /սմարթ-գրատախտակ,պրոեկտոր,հեռուստացույց/

Տարրական օղակում ևս տեղադրել ինտերնետ կապով համակարգիչներ, ցուցադրական սարքեր:

Դպրոցում ստեղծել հրաձգարան՝ ձեռք բերելով օդամղիչ զենք:

Խնդիր

Ֆինանսկան միջոցների պակաս, գնաճ, մոտիվացիայի պակաս:

Ռսիկեր

Ֆինանսական միջոցների պակաս, համավարակ, արտակարգ դրություն:

Ռիսկերը մեղմացնող գործողություններ

Դպրոցի հեղինակության բարձրացում, որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց:

Տնօրենի և գործող խորհուրդների հետ համագործակցության վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցն ունի • Կառավարման խորհուրդ, որը հավուր պատշաճի իրականացնում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և կանոնադրությամբ սահմանված գործառույթը, որն ուղղված է դպրոցի՝ որպես կրթություն և դաստիարակություն ապահովող հաստատություն, զարգացմանն ու առաջընթացին: • Մանկավարժական խորհուրդ	Դպրոցը չունի • Հոգաբարձուների խորհուրդ • Շրջանավարտների խորհուրդ • Խմբակներ՝ ➢ ծնողավարման, ➢ մասնագիտական առաջընթացի ու զարգացման ➢ մեդիագրագիտության /ուսուցիչների և աշակերտների համար/ • ստեղծել ուսուցիչների և ուսուցիչների օգնականների միջև համագործակցության

• Ծնողական խորհուրդ • Աշակերտական խորհուրդ	հարթակ, որ կարողնան աշխատանքի բաշխում կատարել, հասկանալ նպատակները, խնդիրներն ու անելիքները: Հանդուրժողականության և փոխզիջման մթնոլորտում իրականացնել կրթության և դաստիարակության վեհ առաքելությունը:

Նպատակ

Օրենքով սահմանված կարգով կառավարման մարմինների դերի բարձրացում, գործունեության ընդլայնում, համագործակցության բարելավում:

Կազմակերպել ներդպրոցական մեթոդական և առարկայական սեմինարներ և վեբինարներ:

Մշակել և ներդնել ուսուցչի աշխատանքի գնահատման համակարգ:

Իրականացնել նյութական խրախուսումներ առաջատար ուսուցիչների համար:

Ընդլայնել ծնողների մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացում:

Բարձրացնել ծնողխորհրդի իրական դերը դպրոցի կյանքում, նրանց իրավասությանը փոխանցել մի շարք հարցեր, ինչպիսիք են՝

- ✓ դպրոցի արտաբյուջետային որոշակի միջոցների տնօրինում՝ դպրոցի վարչատնտեսական համակարգողի անմիջական խորհրդատվությամբ

ու մասնակցությամբ

- ✓ արտադպրոցական միջոցառումների կազմակերպում,
- ✓ սովորողների վարքի և կարգապահության հարցերի, ինչպես նաև ճաշարանի աշխատանքի և սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողություն:

Խնդիր

Հանդիպումների, քննարկումների համագործակցության խրախուսելի միջոցների կիրառում,

Մասնակցային գործընթացի զարգացում, դերի կարևորում:

Մշտական հսկողության սահմանում՝ ըստ դպրոցի ներքին կանոնակարգի:

Ռիսկեր

Կառավարման խորհրդի նախաձեռնողականության պակաս, որոշումների ժամանակավրեպ կայացում, գործողությունների իրականացում, որոշ անդամների ձեռնպահ վերաբերմունք:

Ռիսկերը մեղմացնող գործողություններ

Ազատ արտահայտվելու, փոխզիջողականության, փոխադարձ հարգանքի, գործնական մթնոլորտի ձևավորում, աշխատելու, աջակցելու մոտիվացիայի ստեղծում:

Կրթության որակի ապահովում և ուսուցման գործընթացի կազմակերպում

Կրթության ու դաստիարակության ոլորտում որակ ապահովելու և գործընթացը ճիշտ ու հաշվեկշռված կազմակերպլու ուղիներն ու միջոցները բազմազան են, բայց ճշգրիտ ուղին գտնելը կարևոր է, նաև ռիսկային, քանի որ դժվար է հինգամյա կտրվածքով ընտրել ու որոշել մի քայլ և կարողանալ կանխատեսել բոլոր ռիսկային գործոնները, այդ իսկ պատճառով առավել հեռանկարայինն ու իրատեսականը ներկայացնում եմ ընդհանուր, իսկ մասնավոր դեպքերը ժամանակի հետ բնականաբար կքննարկվեն օրենքի սահմաններում կանոնակարգված ձևաչափերով ու հիմնավորմամբ. և ուրեմն՝

<u>Ընդգրկվածություն</u>. ուսման որակի ապահովման մշտադիտարկման գործընթացում կարևորում եմ բոլոր շահառու մարմինների ընդգրկվածությունը՝ մասնավորապես ծնողական և աշակերտական խորհուրդների ներգրավվածությունը:

Թիմային մոտեցում. դպրոցում ուսումնական որակի ապահովման նպատակով թիմային մոտեցումը կստեղծի հանդուրժողականություն ու բարիդրացիական մթնոլորտ, որն էլ կարող է ձևավորել գործող որակի ապահովման հասանելի լինելը բոլորին, այդ թվում ծնողներին, որն էլ իր հերթին կապահովի ընդհանուր դիտարկում, ուսումնասիրում և հետադարձ կապ:

Հաշվետվություն և թափանցիկություն. Կվերակազմակերպվի դպրոցի վեբ կայքը,որը կապահովի ուսումնական գործընթացի մասնակիցներին տրվող տեղեկատվության մատչելիություն, ճշգրտություն և կարևորություն, մեկնաբանություն թողնելու հնարավորություն,կլուսաբանի դպրոցի առօրյան , կատարված աշխատանքը, այդ թվում նաև ֆինանսական գործունեությունը:Կայքը կգործի դասակարգված:

Դպրոցի գործող կայքը պարբերաբար կթարմացվի կրթական ծրագրերի վերաբերյալ նորություններով ու փոփոխություններով:

Դպրոցի ուսումնական գործընթացում ներգրավված մեթոդմիավորումները, մանկավարժահոգեբանական աջակցություն իրականացնող թիմը միասնական կներկայացնեն հաշվետվություններ ըստ սահմանված ժամանակացույցի, որով էլ կկատարվի գնահատում:

Արժեհամակարգի ստեղծում. Դպրոցը, ուսումնական որակ, դաստիարակություն ապահովելով հանդերձ, հանդիպումներով, էքսկուրսիաներով ու միջոցառումներով կստեղծի և կձևավորի բարձր արժեհամակարգ և մշակույթ, որը հետևողականորեն կիրագործվի ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից: Ստեղծված արժեհամակարգը ուսման որակի գնահատման, շարունակականության, բարելավման և վերահսկման գրավականը կլինի:

Կրթության կազմակերպման լիարժեք, լիակատար արդյունք ունենալու համար նախատեսվում է կրթությունը կազմակերպել եռանկյունային համակարգով, որի գագաթին սովորողն է, հիմնային երկու կողմերը մանկավարժն ու ծնողը, իսկ բարձրությունը, որ կպահի հավասարակշռությունը երեք շահագրգիռ կողմերի միջև,տնօրենն է՝ վերահսկող մեխանիզմով, նախապես կանոնակարգված ու հրամանագրված պատասխանատուներով: Ընդ որում պատասխանատու կընտրվի ոչ թե

ի պաշտոնե, այլ մարդկային հատկանիշներով, իր գործին նվիրյալ, պրպտող, ձգտում ունեցող մանկավարժ:

Որպես վերահսկող մեխանիզմ նախատեսվում է կազմել խորհուրդ, որում նրգրավված լինեն ծնողներ: Որովհետև չկա ավելի շահագրգիռ կողմ, քան ծնողն է, երբ երեխան գոհ է դպրոցում անցկացրած ժամանակից, վաստակած գնահատականից ու ձեռք բերած հմտությունից: Այսինքն՝ եթե ունենանք փոխըմբռնողականություն, կունենանք նաև գոհ ծնող: Ասվածը չի ենթադրում ուսուցում իրականացնել ծնողի վերահսկողությամբ, այլ, տեսնելով ուսուցչի կողմից նվիրվածություն և հարգանք, ավելի կգնահատի ուսուցչի աշխատանքն ու հոգածությունը: Վերահսկողություն ասվածը ինքնըստինքյան կդառնա համատեղ աշխատանք, կլինի տրամաբանորեն ենթադրելի շղթայական կապ ուսուցիչ-ծնող-աշակերտ եռանկյունու միջև: Արդյունքում կշահի կարևորագույն նպատակը՝ սովորողի կրթությունն ու դաստիարակությունը:

Հետևաբար, որպես **<u>վերահսկող</u>** մեխանիզմ՝նախատեսվում է կազմել **խորհուրդ,** որը կառաջնորդի և գործունեությունը կպլանավորի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալը (կամ ավելի երիտասարդ ու գործին նվիրված աշխատակից), որում ընդգրկված կլինեն ծնողներ, մանկավարժահոգեբանական աջակցող թիմից ներկայացուցիչ, ուսուցչի օգնական: Այս խորհրդի աշխատանքը կկանոնակարգվի Դպրոցի օրինակելի կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան, այսինքն՝ ծնողական խորհրդին կից մեկ այլ խորհրդի ընդգրկվածություն: Խորհրդի պարտադիր պարտականությունը կլինի անցկացնել դասալսումներ, կազմել արձանագրություն, եզրակացություն և հաշվետվություն: Ակնհայտ է, որ դասին մեկ այլ անձի՝ առավելապես ծնողի ներկայությունը կպահանջի ուսուցչից ջանքերի առավելագույն ներդրում ,իսկ արդյունքում՝ ստացված դասապրոցես:

<u>Հաշվետվություն</u> ներկայացնելը նախատեսվում է իրականացնել հետևյալ ժամանակաբաշխումով, ընդ որում դպրոցի կանոնադրությամբ և մանակավարժական խորհրդի նիստով որոշված և հաստատված բոլոր հաշվետվությունները ևս.

- սեպտեմբերի 1-ից մինչև աշնանային արձակուրդ

- նոյեմբերից (նայած արձակուրդի ավարտի ամսաթվի) մինչև ձմեռային արձակուրդ
- հունվարից մինչև գարնանային արձակուրդ
- ապրիլից մինչև տարեվերջ

Արձակուրդների ընթացքում նախատեսվում է նաև գրավոր աշխատանքների ստուգում (քանակի, ստուգման որակի, գնահատականի համապատասխանություն), անձնական գործերի ստուգում, գործող խորհուրդների արձանագրությունների մատյանների ստուգում:

<u>Ակնկալվող արդյունքը.</u> ենթադրելի է՝ սկզբնական շրջանում ռիսկային կլինի, կառաջացնի դժգոհություններ, կունենանք ռիսկային գործոնի նվազեցում մանկավարժների խոցելի խմբի կողմից, բայց ժամանակի հետ ստեղծագործ աշխատանքը, ինքնակրթությունը, մրցակցությունը անպայման արդյունք կտան, և ծնողի գովեստը կլինի խրախուսելի , մոտիվացիա առաջացնող ու մրցունակություն ապահովող: Իսկ որտեղ մրցակցություն, այնտեղ որակ:

<u>Ծրագրի ֆինանսական</u> մասի ապահովումը հիմնականում, բնականաբար, բյուջեի՝ որպես հիմնական ու պարտադիր ներդրում ,ծախսերի համար հատկացվող ֆինանսի խնայողություններով է նախատեսվում՝ որպես հիմնական ու պարտադիր ներդրում, բայց ֆինանսավորման այլ աղբյուր կարող են հանդիսանալ.

- Դպրոցի կանոնադրության 124-րդ և 125-րդ կետերը
- Մասնակցությունը ՀՀ կամ օտարերկրյա դրամաշնորհային հիմնադրամների՝ մրցույթային հիմունքներով իրականացվող ծրագրերին:

Լրացուցիչ ֆինանսավորում(հովանավոր կամ նվիրատու) ունենալու դեպքում դպրոցը ըստ առաջնահերթության կունենա

- Մեդիագրագիտության խմբակ (այս խմբակի կարևորությունն ու պարտադիր լինելը առաջնային է ու ժամանակի թելադրանք)
- Ռոբոտաշինության խմբակ

- Համակարգչային իմացության խմբակ (նաև ուսուցիչների համար)
- Երրորդ օտար լեզվի խմբակ
- Արտահայտիչ ընթերցանության կամ ասմունքի խմբակ

Մյուս տարբերակը. փնտրել հովանավոր ձեռներեցներ, կազմակերպություններ կամ հիմնադրամներ, որոնք կաջակցեն հաստատության այս կամ այն խնդրի ֆինանսավորմանը, գույքի ձեռքբերմանը:

Ի վերջո խմբակների ստեղծումը իրատեսական կլինի կամավորության սկզբունքով աշխատելու, աջակցելու ցանկություն ունեցող ակտիվ ուսանողների շնորհիվ:

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները

Գերնպատակ և գերխնդիր համարում եմ «թողարկել» հայրենասեր, հայրենանվեր, ազգասեր, ազգապաշտպան, օրինապահ շրջանավարտ, վաղվա լավ քաղաքացի, լավ մարդ, ով հստակ ճանաչում է իր հայրենիքը, գիտի իր պատմությունը, գիտակցում է՝ ինչ նախնիներ է ունեցել և ինչպես է պատմության քառսից «հառնել որպես փյունիկ»:

Շրջանավարտ, ով զինված կլինի գիտելիքով, կունենա հստակ ձևավորված բարձր արժեհամակարգ և կայուն դիրքորոշում:

Մեծագույն նպատակ է տալ հայրենասեր ու հայրենանվեր շրջանավարտ, բայց և խնդիր է գործ ունենալ մի սերնդի հետ, ով տեսել ու ապրել է անհավասար պատերազմ, և որի ընթացքում, ցավոք, ունեցել է նաև անդառնալի կորուստ:

Այս տեսլականը ունենալու համար ֆինանսականը քիչ կարևոր է, երբ կարելի ու հնարավոր է դասղեկի ժամերը աչքաթող չանել, պարտադիր անցկացնել երկուշաբթի առաջին ժամին ու սկսել օրհներգով, երբ կարելի է ներկա գտնվել դասղեկի ժամին կամ նույնիսկ վարել: Այն հնարավորություն կտա անձնապես ճանաչել յուրաքանչյուր աշակերտի, ճանաչել նրա անհատականությունը, նախասիրությունները և մարդկային որակները:

Երբ կարելի ու հնարավոր է այցելել թանգարաններ, պատմամշակութային վայրեր, երբ էքսկուրսիան նպատակային է, ոչ թե ժամանցային, երբ կարելի է կազմակերպել ֆիլմի դիտում, ապա քննարկում, հետո ընթերցում-համապատասխանեցում, և մի օր էլ կունենանք ֆիլմի ստեղծում կամ գրքի ստեղծում: Երբ կարելի է դպրոց հրավիրել ու հանդիպում կազմակերպել Գյումրվա ականավոր արվեստագետների, գրողների, վաստակաշատ դերասանների, մարզիկների, նաև քաղաքական գործիչների: Երբ կարելի է այցելել զորամիավորում, մանկատուն, ավագ դպրոցներ ու վարժարաններ, թատրոն՝ հետնաբեմ...

Պատասխանատուները

Ի պաշտոնե յուրաքանչյուր ուսումնական հաստատության առաջին պատասխանատուն տնօրենն է՝ իր պաշտոնեական նկարագրի գործառույթների համապատասխան:

Ուսումնական, ուսուցման գործընթացի կարգավորման, ուսումնական տարին լիարժեք ու կանոնակարգված սկսելու համար պատասխանատու է հաստատության աշխատակազմը՝ և՛ մանկավարժական համակազմը՝ ներառված մեթոդմիավորումները, և՛վարչական մասը, և՛ մանկավարժահոգեբանական աջակցություն ցուցաբերող մասնագետների թիմը՝ ներառված Շիրակի Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի ներկայացուցիչը:

Կիրականացվի վարչական բարեփոխում, որի նպատակն է ապահովել դպրոցի գործունեության այնպիսի կազմակերպում,երբ յուրաքանչյուր աշխատակից ունի իր պարտականությունների սահմանը, գիտակցում է, որ մշտական վերահսկողություն կա , և պատասխանատու է անհատապես:

Վարչական բարեփոխումների շրջանակներում կիրականացվի նաև տնօրենության կազմի մեջ պարտականությունների բաժանում,ըստ որի կապահովվի.

բոլոր օղակներում արդյունավետ աշխատանք և կառավարում աշխատանքի հստակ քանակական ու բովանդակային արժևորում:

Տարեկան բյուջեի նախահաշվարկի կազմումը, բյուջեի կառավարումն ու տնօրինումը, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի ապահովումը, ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ կարիքների ձեռքբերումը, վարչատնտեսական փաստաթղթերի շրջանառումը, վարումը, պահպանումը նաև դպրոցի գույքի պահպանումը, իրականացնում է օրենսդրությամբ և օրինակելի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորություններով վարչատնտեսական գործընթացի համակարգողը:

Արդյունքների գնահատման չափանիշները

Թվարկված գործողությունների ու քայլերի համար սահմանված ցուցանիշներն ու չափանիշները կարտացոլվեն յուրաքանչյուր արձանագրության մեջ, որում գրանցված առաջխաղացումների կամ թերությունների համեմատությամբ հնարավոր կլինի գնահատել գործունեության կատարողականությունը:

Արդյունքների գնահատման չափանիշները չափելի և տեսանելի կլինեն ներքին և արտաքին գնահատումների արձանագրություններից արված քաղվածքների համեմատությամբ:

Գնահատականը առհասարակ տրվում է համեմատության արդյունքում:

Ռիսկերը

Սույն զարգացման ծրագրի նպատակների ու խնդիրների իրականացման ճանապարհին ռիսկային հնարավոր նվազեցման գործոն կարող է հանդիսանալ ուսուցիչների խոցելի

մի խումբ, որին կարող է ցնդաբանություն թվալ մշտական դասալսումը կամ վերահսկող խորհրդի գործունեությունը ըստ նշված գործառույթների:

Ռիսկերը մեղմացնող գործողություններ

Մշտադիտարկումը, նյութական խրախուսման միջոցները, ուսման որակի բարձրացումը, դպրոցի հեղինակության ու վարկանիշի բարձրացումը կնպաստեն դպրոցում աշակերտի թվի աճին և, բնականաբար, ուսուցիչների շրջանում կառաջանա մոտիվացիա , ինքնակրթվելու և լավագույնին հավասարվելու ձգտում:

Ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

Ըստ հաստատության տրամադրած տվյալների՝ դպրոցը նյութատեխնիկական բազայով հարստացնելու, գույքով և անհրաժեշտ պարագաներով համալրվելու կարիք ունի: Ունի նաև լաբորատորիաների, առարկայական կաբինետների, ինչպես նաև տարածքի խնդիր:

Պարզ է, որ աշխատանք, ջանք, ներդրում է հարկավոր և՛ ժամանակակից ուսուցում ապահովելու, և՛ կատարողականը հավուր պատշաճի ներկայացնելու համար:

Վերահսկողության մեխանիզմները

Հանրակրթական ուսուցմանը միտված յուրաքանչյուր քայլ վերահսկելի է օրենքով սահմանված կարգով, դպրոցի օրինակելի կանոնադրությամբ և ըստ հաստատության ներքին կանոնադրության սահմանված դրույթների:

Ուսուցմանը և դաստիարակությանը միտված յուրաքանչյուր գործողության համար օրենքով սահմանված կարգով նախատեսվում է սահմանել հաշվետվությունների ձևեր և ժամանակացույց՝ հաստատված խորհրդի կողմից:

Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականի վերահսկողությունը իրականացվում է ուսումնական հաստատության կոլեգալ մարմնի կողմից՝ ըստ սահմանված ժամկետների՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին:

Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները

N	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ
1.	Դիտարկում ուսումնա-սիրում	Խնդիրների բացահայտում վերլուծում	Աշխատանքային |I |կիսամյակ	Ժողովների և նիստերի հրավիրում, դասալսումներ, բաց դռների օր			
2.	Ծնողխորհրդի, աշխորհրդի ձևավորում և այլ խորհուրդ-ների ձևավորում	Ստեղծել ակտիվ, նվիրյալ ծնողական խորհուրդ և աշակերտ-ական խորհուրդ	1)աշխատանքային I ամիս 2)յուրաքանչյուր ուսումնական տարվա I ամիս	Ակտիվ այցելություններ, առաջարկություններ, միջոցների և հնարավորութ-յունների ներդրում օրենքով սահմանված կարգով			
3.	Ձևավորել վերահսկող խորհուրդ	Առավել ակտիվ ու շահագրգռված ծնողներից, մանկավարժ ահոգեբանակ ան աջակցություն ցուցաբերող թիմից և նաև յուրաքան-չյուր մեթոդմիավո-րումից (ցանկալի է նախագահ՝ նայած ակտիվութ-յան) ներկայացու-ցիչ, համատի-րությունից մեկ ներկայացու-ցիչ	Աշխատանքային II ամսում , այդուհետ 2023-2028թթ յուրաքանչյուր ուսումնական տարվա I ամսում	Մանկավարժակ ան խորհուրդի նիստին ներկայացնել խորհրդի առաքելությունը, ուսուցիչների հավանության ցուցանիշ գրանցել (որը ռիսկային է), առաջադրել վերահսկող խորհրդի ղեկավար տնօրենի ուսումնական գծով տեղակալի (կամ այլ նվիրյալ մանկավարժի) :Ստեղծել և կազմել համապատասխ ան			

				արձանագրութ- յան ձևաթուղթ,ինչպ ես նաև՝ աշխատանքի գնահատման չափելի, թվայնացված թերթիկ: Ստեղծել հրամանագրված խորհուրդ:			
4.	Որպես ձեռնարկատի րական գործունեութ- յուն՝ ստեղծել լրացուցիչ հանրակրթա- կան ծրագրեր իրականաց- նող խմբակներ	Սովորողները կխորացնեն գիտելիքները և հմտություն- ները տվյալ խմբակի գործունեությ ան շնորհիվ: Դպրոցի և սովորողի կապը կսերտանա: Դպրոցը կունենա որոշակի շահույթ թույլ կողմերը լրացնելու, համալրելու համար	2023-2028թթ ուսումնական տարի (ներառյալ ամառային արձակուրդը)	Առաջարկվող խմբակի կազմակերպչի հետ կապել պայմանագիր խմբում ներառվող աշակերտների քանակի ,տարածքի, զբաղեցրած ժամանակա- հատվածի, կատարելի գործողություն- ների վերաբերյալ: Վերահսկողությ ունը կիրականանա պայմանագրով սահմանված կետերով :			
5.	Մեթոդմիավո րումների նիստեր առարկայական գիտելիքների խորացման նպատակով. գիտելիքի ու փորձի ներդրում և փոխանակում ավագից կրտսեր մանկավարժ- ների համար :	Նպաստել մանկավարժ- ների ինքնակրթ- մանը : Ձևավորել իր ուժերի ու գիտելիքների վրա վստահ մանկավարժ ական համակազմ, որ չի երկմտի մասնակցել սեփական նախաձեռն- ությամբ իրականաց- վող ատեստավոր մանը:	2023-2028թթ յուրաքանչյուր ամիսը մեկ, հետզհետե՝ ավելի հաճախ	Գիտելիքի փոխանակման, ձեռքբերման նախընթաց աշխատանքը նախատեսվում է համապատաս- խան առարկայի շտեմարան- ներով, հետո ինքնուրույն կազմվեն թեստեր՝ ճիշտ պատասխան- ներով և փոխանակվեն՝ մեկը բոլորի համար…			

		Արդյունքում կշահի ուսուցումը:					
6.	Կոլեգիալ և մանկավարժական խորհրդների որոշումով դասղեկի ժամերը անցկացնել յուրաքանչ-յուր երկուշաբթի առաջին ժամին, պլանավորել դասղեկի ժամերը որպես ուսումնադաստիարակչական, ճանաչողա-կան աշխատանք	Խոսքը ուժ է . սովորողների մեջ կձևավորվի բարոյական և հոգևոր բարձր արժեքներով անհատ	2023-2028թթ Յուրաքանչյուր երկուշաբթի, բացառությամբ ոչ աշխատանքա-յին օրերի	Դասղեկի ժամերը սկսել օրհներգով, հետևել սովորողների հիգիենային , տրամադրել ու խթանել ուսումնական շաբաթվա պատրաստակամությանը			
7.	Սահմանել «հանդիպման օր». հրավիրել անվանի մարդկանց՝ դերասան, նկարիչ, մարզիկ, քաղաքական գործիչ…	Յուրաքանչ-յուր հանդիպում սովորողի ներաշխարհում կավելացնի մեկ մասնիկ դեպի դրականը, դեպի գեղեցիկը, վսեմը, լավը, կառաջացնի մոտիվացիա վերթևելու:	2023-2028թթ Ուսումնական տարվա յուրաքանչյուր |II ամսվա վերջին շաբաթ օրը՝ վեցօրյա աշխատանքայի ն ռեժիմի դեպքում, ուրբաթ օրը՝ հինգօրյայի դեպքում	Նախընթաց երկու ամսի ընթացքում սովորողները աշակերտական խորհրդի առաջնորդությամբ որոշեն՝ ում են հրավիրելու, նախապատրաստեն հարցեր, և որպեսզի հարցերը հանպատրաստից չլինեն և անակնկալի չբերեն, նախապես քննարկվեն դասղեկի կամ դակ-ի հետ			
8.	Ակտիվացնել դպրոցի սոցիալական կայքը	Հետաքրքրվողների շրջանում կամ շահագրգիռ կողմերի մոտ կունենանք թափանցիկ, տեսանելի աշխատանք: Կայքը մանկավարժն	2023-2028թթ Ամեն աշխատանքա-յին օր	Օպերատորը ակտիվորեն ներկայացնի օրենքներն ու փոփոխություն-ները դպրոցից դուրս, իսկ դպրոցի ներսում՝ ուսումնադաս-տիարակչական			

		երին ևս կապահովի տեղեկա-տվությամբ, որ վերաբերում է օրենքների փոփոխությունններին, դպրոցին վերաբերող նորություններին		գործընթացը՝ նիստ, հանդիպում, բաց դաս, ինտերակտիվ դաս, միջոցառում, էքսկուրսիա և այլն: Կնկարի և համապասխան նկարագրով ու մեկնաբանությամբ կտեղադրի :			
9.	Ծրագրային առաջնորդական թիմ ստեղծել	Մասնակցել դրամաշնոր-հային մրցույթների դպրոցը անհրաժեշտ նյութտեխնի-կական բազայով և գույքով ապահովելու նպատակով	2023-2028թթ	Արդյունավետ ծրագիր կազմելու համար ներգրավել վարչատնտե-սական համակարգողին, հաշվապահին, կարգավորել և ստեղծել համապատաս-խան փաստաթղթեր և լիազորագրեր, նշված ժամկետում կազմուպատ-բաստ մասնակցել համապատաս-խան մրցույթի:			

Եզրակացություն

Լիահույս եմ, որ կարճ ժամանակահատված հարկավոր կլինի ստեղծելու ուսումնական հաաստատության կանոնակարգին ու նկարագրին հարիր դպրոց, որ կծառայի իր նպատակին:

Ու հաստատությունում կտիրի բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտ,

ու դպրոցը կդառնա սիրող ու կանչող միջավայր,

ու բոլոր շահագրգիռ կողմերը գոհ կլինեն իրենց կատարածից, իսկ ակնկալվող արդյունքներն էլ կդառնան բարձր հեղինակության ու վարկանիշի գրավական,

ու կուենանք ուսուցիչ, որ գնահատականը զենք չի դարձնի, աշակերտ, որ մոտիվացիան գնահատականը չի լինի, այլ գիտելիքը, ծնող, որի ամենօրյա հարցը չի լինի «ինչ ես ստացել»-ը, ու այդ ժամանակ ջուրն իր հունով կգնա...